

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 14-ին

Շատ յաճախ է պատահում մեզ կարգալի վիճակում յօդուածները եւ թղթակցութիւնները, որոնց մէջ երեւան են հանուում վաշխառուների կատարած անխղճութիւնները։ Աւելորդ չենք համարում հաղորդել «Մշակի» ընթերցողներին վաշխառութեան մի նոր տեսակի մասին, որի գործադրողը մի տիրացու է։ Ահա իրողութիւնը։

Այս տարվայ մարտ ամսին Ղանի գիւղացի (Կարսի գաւառ) Ա. Մ. Ն. գալիս է Կարս եւ խնդրում տիրացու Վրթանէսից 25 րուբլի, որ անասունների համար դարման առնէ։ Աստուածավախ տիրացուն համաձայնում է տալ փողը միայն այն պայմանով, որ պարտք ուղղող գիւղացին տոկոսի փոխարէն տաւոր կոտ ցորենի ցանէ, քաղէ կարսէ եւ բոլոր արդիւնքը յանձնէ իրան, իսկ իր աշխատութեան վարձ վերցնէ միայն դարմանը։ Ինչ անէ խեղճ գիւղացին, մնացել է անձար։ Կարիքից ստիպված համաձայնում է այդ հրէջշային պայմանին եւ ստանում 25 րուբլին, որով գնում է ընդամենը 50 պուդ դարման, որը բաւականանում է անասուններին միայն 5 օր։ Ցորենն էլ ամենալաւ արտի մէջն է ցանում, ութ կոտ միայն, որովհետեւ այդքան հազիւ է տանում արտը, մնացած երկու կոտն էլ կրկին վերադարձնում է արդացուին։

Տեղի լաւութեան պատճառով եւ տիրացուի արգիլքի չորհրդէ շատ լաւ արդիւնք է ստացվել—չորս սայլ, իսկ սայլը տալիս է քանի կոտ, ընդամենը, ուրեմն, 80 կոտ։ Գուրս գալով տիրացուի տուած ութը կոտ սերմացուն, զուտ արդիւնք մնում է 72 կոտ, որ եթէ հաշուելու ինքնը ալժման ամենաէական գնով (կոտը 80 կօպ.) կը ստանանք 57 ր. 60 կօպ.։ Ուրեմն վեց ամսվայ ընթացքում մեր տիրացուն ստանում է թէ իր տուած 25 րուբլին, թէ ութը կոտ ցորենը եւ 57 րուբլի 60 կօպէլ էլ տոկոսի Բայց արանով էլ չէ բաւականանում տիրացուն, նա պահանջում է գիւղացուց եւ դարմանը, չը նայելով որ խոստացել էր դարմանը գիւղացուն թողնել։ Աստուած խիղճ տայ տիրացուին, որ գոնէ դարմանը թողնի գիւղացուն։

Շատերն են այդ գործով պարապում, միայն տիրացուն չէ, մինչեւ անգամ քահանաները։ Մենք անձամբ ճանաչում ենք մի գիւղացի քահանայի, որ այդ առեւտուրով է պարապում։ Նրեւի քահանայի օրինակն է, որ վարակել է եւ տիրացուին։

Արմ. Աւետեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թեմական իշխանութեան կարգադրութեամբ բեկանված են պատգամաւորական ընտրութիւնները էջմիածնեւոց եւ Ձորաբաշու եկեղեցիներում եւ նշանակված են նոր ընտրութիւններ։

Նոր կարգադրութեամբ թոյլ է տրված, որ տարրական դպրոցների համար ուսուցչական իրաւունքներ ստացած կանայք մուտք գործեն իրական գիմնազիաների պատրաստական դասարանները վարժուհիների պաշտօնով եւ վայելին ծառայութեան արտօնութիւններ։

Ռուսաց գիււորական զինուոր չտարը, ու չաղբութեան առնելով այն հանգամանքը, որ շատ լրագրներում հրատարակված են չինական պատերազմի մասին մանրամասն տեղեկութիւններ, որոնք յաճախ աւելի հարուստ են, քան պաշտօնական հաղորդագրութիւնները, խնդրում է մամուլի ներկայացուցիչներին ուղարկել իրանց համարները գիււորական շտաբի գրաւարանին։

Նոր-Նախիջևանի քաղաքային դռնայում ներկայումս քննութեան առարկայ է հանգուցեալ հայ միլիոնատէր Պօպօլի ժառանգութեան հարցը, որի վերաբերութեամբ յարուցված են վէճեր։ Պօպօլ թողել է 5½ միլիոնի կարողութիւն, որի մի մասը յատկացրած է Բարեգործական նպատակներին։ Սակայն ժառանգները ջանքեր են գործ գնում կտակը փոխելու իրանց օգտին։

ԱՆԻՔԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 27-ից. «Եթէլ գիշեր սպանված է աւաղակապառ Դալի-Իւսուֆը։ Սա այն հոշալաւոր աւաղակապառն էր, որ անցել աւստին կողովպեց Նրեւանի գծի վրա աշխատող 500

բանուորներին եւ կապալառուին եւ վիրաւորեց ժանդարմին»։

ԱՆԱԼՔԱՆԴՐՈՊԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս, գիշեր ժամանակ, անյայտ անձնաւորութիւններ պատուհանով մտնում են կալուածատէր Գաւրիէլ Գանանեանի տունը, տանտ/րոջ բացաւ կայութեան ժամանակ, եւ գողանում են գորգեր եւ այլ իրեղէններ, մի քանի հարիւր րուբլի արծողութեամբ։ Գողերը դեռ չեն գտնվել»։

ԱՌԻՔԵՆԻ ԳԻՐԳԵՆ (Ջիբրայէլի գաւառ) մեզ գրում են. «Մուղանի տափարակի շարունակութիւնը ձգվում է մեր գաւառի ամբողջ երկարութեամբ, Արաքսն ի վեր, մինչեւ Հաւարու գետը։ Այդ տափարակը մեզ մօտ Արաքսվար է կոչվում։ Նրա ընակիչները բացաւ ուսպէս պարսիկներ են։ Նրանք պարապում են մասնաւորապէս երկրագործութեամբ եւ այգեպանութեամբ, իսկ զինուոր պարապումը անասնապահութիւնն է։ Ամառ ժամանակը, երբ նրանք իրանց հօտերով քաշվում են ասար, Արաքսվար անապատի է նմանում։ Ամբողջ տարածութեան վրա, բացի «Եւաչան» կոչված բոյսից, ոչինչ չեն գտնի։ Այստեղ—այնտեղ միայն երեւում են օազիսի նման «Ղալաղներ» (ձմերանոց) այգիներն ու բօսաանները եւ կանաչի տալիս։ Ղալաղները դատարկ են, ամբողջ տափարակը թողնված է պարսկաստանցի աւաղակների եւ մաքանեկների արմատադրութեան տակ։ Արաքսվարի մէջտեղով հոսում է Ջրառատ Արաքսը, իսկ մի կողմովը Հաւարու գետը, սակայն տափարակը ջուր չունի, օգուտ չէ տալիս մարդկանց եւ մարդիկ թողնում են նրան ամառը որպէս մի անօգուտ երկիր։ Բայց իսկպէս այդ լայնատարած դաշտը աւանց օգուտի չեն, նրանք կարող են օգուտներ տալ, եթէ գտնվի մի նախաձեռնող մարդ, ջուր վերցնէ Արաքսից կամ Հաւարու գետից եւ յագեցնէ Արաքսվարի ծարաւը։ Նոյն իսկ առաջի տարին այդ անապատը կը ծածկվի բամբակի եւ բրինձի արտերով եւ ազգայնաւորութիւնն ու նախաձեռնողը իրանց օգուտները կունենան։ Լուր է տարածված մեզ մօտ, որ միլիոնատէր պ. Ա. Մանթաշեանը մտադիր է մի մեծ ջրանցք անցկացնել եւ ջրաբեր դարձնել ամբողջ Արաքսվարը։ Ինչպիսի միտք։ Որքան օգուտի եւ ուրախութեան պատճառ կը լինի նա, եթէ իրագործվի այդ միտքը։ Հաւարու բերաններ կօրնեն բարերարի կեանքը, իսկ ջրանցքը իրեն մի փայլուն արձան կը դարձարէ այժմվայ ամառի դաշտերը։ Ուրեմն յուսանք, որ մեր անկիւնն էլ այնքան մոտացված չէ, որքան մենք էինք կարծում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Ձը նայելով, որ ամենից ուշադրութիւնը եւ քաջայայտ եւ Ամերիկայում այժմ կենտրոնացած է չինական գործերի վրա, չը նայելով, որ այդ երկրների քաղաքագէտները լարում են իրանց բոլոր ոյժերը մի կերպ եւ գտնելու եւ լուծելու այդ չափազանց բարդված խնդիրը, որ սպառնում է կուսակառուած դառնալ աշխարհի ամենամեծ պետութիւնների մէջ եւ այդպիսով անհամար վնասներ առաջ բերել ազգերի համար, բայց եւ այնպէս արտաքին գործերը քաղաքակրթ շախմատում արգիւք չեն դառնում ներքին կեանքին ընթանալու իր ընական, սովորական շաղկուտ։ Պատերազմական բեմի հեռուութիւնը այս երկրների մէջ ունի իր ուրուշ նշանակութիւններ։ Ներկայ պատերազմը չէ կարողանում այնպիսի զգալի ազդեցութիւն գործել ազգերի ներքին կեանքի վրա, որպիսին կը գործէր անյուշտ, եթէ տեղի ունենար աւելի մօտիկ Եւրոպայի եւ Ամերիկայի սահմաններին։ Եւրոպայում, որ շատ մօտ է չինական պատերազմական բեմին, ընդհակառակը պատերազմը եւ նրա հետ շաղկապված այլ հարցեր առաջ բերին նոյն իսկ միլիտարական կրիզիս։ Եւրոպայում համեմատաբար թոյլ եւ անվճռողական միլիտարութիւնը, չինական հարցի ճնշման տակ, ստիպված էր տեղի տալ մարկիզ Իտալի աւելի եռանդուն ազատամարտ միլիտարութեանը։

Արեւմտեան Եւրոպայում եւ Ամերիկայում, ըստ սովորականին, կեանքը եւ գալիս։ Ներքին քաղաքականութեան անհամար խնդիրները կախնում են ազգերի Անգլիայում եւ Աւստրիայում տեղի են ունենում պարլամենտական ընտրութիւններ, եւ կուսակցական պայքարի տաք մրցութեան մէջ՝ մոռացնել տալիս

առժամանակ եւ Չինաստանը եւ նրա բարդութիւնները։ Սակայն եթէ ոչ չինական պատերազմը, արտաքին քաղաքականութեան ուրիշ հարցեր անմիջապէս կապված են պարլամենտական ներկայ ընտրութիւնների հետ թէ Անգլիայում եւ թէ Ամերիկայում։ Կարելի է ասել, որ այդ ընտրութիւնների հէնց առանձնայատկութիւնն այն է այս անգամ, որ երկու երկրներում եւս ներքին հիւժը են ծառայում արտաքին քաղաքականութեան հարցեր։ Անգլիայում—հարաւ-միջերկրական հանրապետութիւնների հարցը, Ամերիկայում—Ֆիլիպպին կղզիների հարցը։ Այդ երկու հարցերն եւս թէ Անգլիայում եւ թէ Ամերիկայում առաջ են բերել մի այլ, աւելի ընդարձակ հարց—իմպերիալիզմի հարցը, որ որքան արտաքին, այնքան էլ վերաբերում է ներքին քաղաքականութեան եւ որ երկու որոշ բանակների է բաժանել ընտրողներին—իմպերիալիստական եւ հակաիմպերիալիստական բանակներին։

Իմպերիալիզմը, որ ձգտում է ընդարձակել պետութեան սահմանները, առանց խտրութիւն դնելու միջոցների մէջ, որ այդ նպատակով աշխատում է ոչ միայն միլիտարիզմի պետութեան մէջ՝ ի վնաս ժողովրդական մասնաւոր տնտեսական շահերի, որ աշխարհ գրաւելու եւ յալիտակելու գաղափար է յօգուտ խոշոր կապիտալիստների եւ ի վնաս թոյլ ազգերի, մինչեւ վերջին ժամանակներս բոլորովին անձանթ էր Ամերիկայի Միացեալ-Նահանգներին։ Երկար ժամանակ ամերիկացիները Ամերիկայի սահմաններից դուրս չէին ճանաչում մի խնդիր, որ անմիջապէս կապված համարէին իրանց ազգայնական շահերի հետ։ Նրանք խուսափում էին որ եւ է միջամտութիւն գործելուց համաշխարհային արտաքին քաղաքականութեան մէջ, հետեւելով մի խելացի ուղղութեան, որով համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում կարողացան դնել իրանց երկրը քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի վրա, քան եւրոպական հին պետութիւններից շատերը, որոնց քաղաքակրթութեան սկիզբը մի քանի դար առաջ էր ամերիկականից։ Սակայն սկզբված այն օրից, երբ Միացեալ-Նահանգները պատերազմ յայտնեցին Սպանիային եւ խորտակելով նրա ծովային եւ ցամաքային ոյժերը՝ գրաւեցին նրա քաղաքականութիւններից շատերը—Վուրա, Պորտո-Րիկո եւ Ֆիլիպպին կղզիների խումբը, այդ օրից նրանք մեծ դաշափար կազմեցին իրանց կառավարների զօրութեան մասին եւ առան ուրիշ ազգերից երկիրներ գրաւելու ճաշակը։ Սպանո-ամերիկական պատերազմից յետոյ, վերջին հինգ տարիների ընթացքում, իմպերիալիզմի քաղաքական անազգին նուաճումներ գործեց Ամերիկայում եւ այժմ հանրապետական մեծ կուսակցութիւնը, որ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ նորից դրել է Մակ-Կինլէյի, ամերիկական իմպերիալիզմի այդ իսկական սկզբնապատճառի, թեկնածութիւնը, կարելի է համարել ամբողջովին իմպերիալիստական։ Ուղիղ է, ընտրողական պայքարի աջութեան համար՝ Մակ-Կինլէյ եւ նրա կուսակցութիւնը հարկաւոր համարեցին չափաւորել առժամանակ Միացեալ-Նահանգների իմպերիալիստական ձգտումները եւ յետ կանչել գործերը Չինաստանից, բայց դա լոկ ընտրողական մանեւօլը կարելի է համարել, քանի որ Ֆիլիպպին կղզիներում շարունակվում է կռիւը տեղական ազգաբնակչութեան դէմ, որ ոչ մի կերպ չէ կախնում հաշտվել ամերիկական տիրապետութեան հետ։

Ցաւալին այն է, որ թէ Անգլիայում եւ թէ Ամերիկայում, միջ ազատութեան կարապետ երկրներում, իմպերիալիստները յաղթող դուրս կը գան առաջիկայ ընտրութիւններից՝ աւելի եւս յագեցնելով քաղաքակրթ շախմատի առանց այն էլ իմպերիալիստական գաղափարներով լեցուն մթնոլորտը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՄԱՆԻՑ

Ռաշտ, սեպտեմբերի 16-ին

Այս տարվայ առատ անձրեւների պատճառով բերքն առատ է, ուրեմն եւ մի քանի ժամանակ կարող է ազատ չընել քաշել խեղճ գիւղացին։ Ենթադրելով բերքն այս տարի շատ առատ էր, բայց անօգուտ, քանի որ հէնց սկզբից գործը փչացաւ։ Եւրոպացիները, ինչպէս եւ յոյները, այս տարի ներմուծեցին այստեղ ոչ թէ այնքան սերմ, որքան պահանջ կար, այլ կրկնապատիկ եւ եռապատիկ քանակութեամբ։ Ինչպէս սովորական է այստեղ, սերմը տալիս են գիւղացիներին այս պայմաններով։ Սերմ տուողը ստանում է բերքի 1/3 մասը, 1/3 մասը

մնում է գիւղացուն, որպէս իր աշխատանքի վարձ, իսկ 1/3 մասը հասնում է հողատիրոջը, որպէս թիւնիների գին։ Այս գործի համար նախապէս մի քանի ամիս առաջ գիւղացին իր կալուածատիրոջ հետ պայմանաւորվուց յետոյ՝ պայմանաւորվում էլ լինի նա դատաւորի ձեռքով, պայմանը քանիքը շատ հեշտ է, բաւական է զոհել մի քանի հարիւր րուբլի եւ կարելի է տասնեակ հազարների պայմանը քանդել, այն էլ դատաւորի միջոցով։ Որովհետեւ այս տարի, ինչպէս ասացինք, սերմի քանակութիւնը կրկնապատիկ եւ եռապատիկ էր քան պահանջը, ուստի սերմատէրերը ամեն միջոց պիտի գործ դնէին, որպէս զի կարողանային իրանց սերմը բաժանել, որ մնալով չը փչանար, ուստի նրանք սկսեցին գիւղացիներին կաշառել, որպէս զի նրանք նախապէս պայմանաւորված սերմատիրոջ սերմը վերադարձնեն եւ վերցնեն նրանից, որը նրանց փող կը տայ նաեւ սերմի հետ։ Սկզբում այս բանը կատարվում էր ծածկաբար, բայց երբ այդ միջոցին գիմեցին բոլոր գիւղացիները եւ տարած սերմերը վերադարձրին սերմատէրերին, այդ առիթով շատ զանգատներ մտան հիւպատոսարան եւ պարզից դատաստանատները սերմատէրերի կողմից։ Այս անգամ դատաւորների արդիւնքների դռները բացվեցին եւ բացի այն կաշառքները, որ նրանք ստանում էին՝ վճռելով գործը արա կամ նրա կողմը, օրէնքի ձեւ ստացաւ յայտնապէս սերմի հետ նաեւ փող տալը։

Եւ ինչ եղաւ հետեւանքը։ Այն, որ գիւղացին փողից գրաւվելով՝ տարաւ ոչ այնքան սերմ, որքանի համար տեղ կամ թիւնի ունէր, այլ կրկնապատիկ, ուստի եւ բօժօրի քանակութիւնը թեւեւ կրկնապատկեց, բայց շատ մանր եւ արժէքը կորցրած բօժօր ստացվեց։ Այս է ահա գիւղացու վնասը, իսկ սերմատէրի վնասը։ Չնայած այն եղաւ, որ բաւական փող փչացրեց եւ ստացած բօժօրն էլ արտասահմանի վաճառեցներում արժէք չունի։ Ցորենի եւ գարու բերքը Պարսկաստանի միւս կողմերում առատ է եւ գները զգալի կերպով ընկել են։

Ամսիս 7-ին Էնդէլիի նաւահանգստից դէպի չոգենաւ էին գնում նաւակներ, տանելով իրանց մէջ ճանապարհորդներ։ Ամենավառագաւոր տեղը, գետի եւ ծովի խառնարանը, անվտանգ անցան 3 նաւակները, ազատվելով սարսափելի ալիքներից, իսկ չորրորդը զոհ գընաց ալիքներին, խորտակվելով ծովի մէջ եւ տարաւ իր հետ ծովին զոհ 12 հոգի ճանապարհորդներ։ Իրանցից երկուսը սերմատէրերու յոյներ էին, երկուսսարք, ծառիկ հաստիւր։ Ներքին գնում էին չոգենաւ գիմաւորելու իրանց հօրը, խեղճ հայրը չիմացաւ իր որդոց խեղդվելը մինչեւ Ռաշտ հասնելը, որտեղ, ինչպէս լսեցինք, իմպերիալիզմը որդոց մահը, իսկ լազարվեց։ Խեղդվողների թւումն էր նաեւ կանանց հիւանդութեան բաւական ծանօթ բժիշկ կուրքիցի։ մնացածներից մի քանի հոգի թիւվարներ են, իսկ միւսներն ան-յայտ են մնացել։ Թիւվարներից երկուսը գի միայն կարողացան ազատվել։ Այդ նաւակով առնում էին նաեւ պարսից եւ ռուսաց պատը։ վերջինս ազատված է, իսկ պարսից պօստն անյայտացել է։

Էնդէլին յարմար նաւահանգստի չունի, ուստի յաճախ են կրկնում աղափաի դժբաղդը դէպքեր, պարսիկ թիւվարները ալիքներում ժամանակ փոխանակ չը համաձայնելու ծովը գնալ, ընդհակառակը, միամիտ եւ անփորձ ճանապարհորդներին խաբելով՝ տանում են ծովի խորքում թաղում, իսկ եթէ յաջողում է անվտանգ տեղ հասցնել՝ ստիպմամբ պահանջում են առասպելական գին։ Այս անգամանքի վրա կառավարութիւնը ուշք չէ դարձնում։ Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—«Indépendance Belge» լրագրին հաղորդում են Ամերիկայից, թէ Բրայանն մի ճարպիկ քաղաքաւ ընտրողական պայքարի մէջ, որ նրա կողմը պէտք է գրաւէ բազմաթիւ ձայներ։ Շատ չիմանալով գեմօկրատների թեմանքից դժգոհ էին նրա համար, որ նա որոշ դիրք չէր բռնել հարաւային նահանգների մի քանիսի վերաբերմամբ, որոնք փորձել էին սահմանափակել ներքին ընտրողական իրաւունքները։ Բրայանն հիմա ուղղեց այդ սխալը։ Նա ամեն նախիստ լեզուով բողոքեց իր ձայներից մէ-

կուսակցության իրավունքները սահմանափակելու և ինչի դատարանի դեմ, որը մինչև այժմ այնքան յաճախ գործ է դրվում Միացյալ Նահանգներում սեփականության վերաբերմամբ: Բրայանի այդ յայտարարությունը ի նկատի առնելով՝ Գեորգիան նահանգի եպիսկոպոսը, որ ֆիլիպինյան-մեթոդիստական եկեղեցու գլուխ է, անցավ Բրայանի կողմը, և որովհետև նա անպայման ազդեցություն ունի սեփականության վերաբերման վրա, ուստի նրան հրավեր են, որ Բրայանը, չնորսել այդ հանգամանքը, կարող է չափել միայն իր ձեռքով:

«Nuova Antologia»-ում հրատարակված է Կրիսպինի նամակը երեքականյան դաշնակցության մասին, որը, Կրիսպինի ասելով, ոչ թե ինքնաբերական, այլ դեպք էր: Իտալիան 1882 թվին ստորագրեց այդ դաշնակցությունը, որը կապված էր Առաքելայի և Գերմանիայի մեջ 1879 թվին: Իտալիայի մոտեցն այդ դաշնակցության մեջ հետևանք էր այն վտանգներին, որոնք ըստ պատմության էին նրան Առաքելայի և Ֆրանսիայի կողմից: Միայն հզոր և զինուորական մեծ ուժեր ունեցող պետությունները կարող են մրնալուսանալ: Իտալական արմատականները, փոխանակ պահանջելու, որ իտալական զինուորական ուժերը բազմապիսի, պահանջում են զինաթափությունը և դաշնակցությունը Ֆրանսիայի հետ: Դաշնակցությունը հանրապետական և առևտրային երկրի հետ, որպիսին Ֆրանսիան է, ինչ վտանգներով իտալիայի միակողմանական հիմնարկությունների համար: Թուրքիան, որ առևտրային ուժ էր զանազան, զբաղվելով զինվորական գեյի իր քաղաքական շահերի չբացման: Իտալիան իր թույլ, անզորության պատճառով ինքնաբերական ինքնուրույն էր Ֆրանսիայից մի փոքր միայն: Ենթադրյալ ժամանակ, երբ Ֆրանսիան յոթնամյակում էր ամենահարուստ իտալական զաղթականությունը Միջերկրականում: Գերմանիան հակառակ է վարվում: Նա ֆրանսիական զինուորներին հրամանատար է նշանակում: Ենթադրյալ կոմս վալդեբրեկին: Իր յոթնամյակի վերջում Կրիսպինը պնդում է, թե անհրաժեշտ է վերանորոգել երեքականյան դաշնակցությունը 1903 թվին, երբ լրանում է նրա ժամանակամիջոցը:

«National Zeitung»-ի Լոնդոնի թղթակիցը—յաղթող զուրա գնա ասում էր ընտրություններից, Վիկտորիա թագուհին առաջին անգամ կունենա մի պահպանողական միջնորդություն, որ երկու անգամ իրար ետևից իր ձեռքն է առնում: Անգլիայի կառավարությունը զեկր: Սկսած 1837 թվից պահպանողականները ոչ մի անգամ յաղթող չեն դուրս եկել ընտրություններից, իսկ ազատամիտները—հինգ անգամ: Թագուհու առաջին միջնորդությունը լորդ Մեյլորնի ազատամիտ կարգին էր: 1841 թվին այդ միջնորդությունը փոխարինեց մեր Բորեյա Պիլի պահպանողական կարգին: 1847 թվից մինչև 1867 թվից ընտրությունները եղել են վեց անգամ և վեց անգամ իրար ետևից: 1868 թվին Դիլդալի յաղթեց ազատամիտներին 128 ձայների առավելությամբ: Նա կազմակերպեց այն ժամանակ իր առաջին միջնորդությունը, բայց հենց նոյն տարվա ընթացքում պարտություն կրեց և տեղի տուց Գլադստոնին: Այդ նորից Դիլդալի, որ այն ժամանակ արդեն կոչվում էր լորդ Բիկոնսֆիլդ, կրկին յաղթեց ու իր տեղը տուց Գլադստոնին: 1880 և 1885 թվերին ազատամիտները երկու անգամ իրար ետևից յաղթող զուրա եկան ընտրություններից:

Վալդեբրեկի գրում են երեքականյան լրագրողներին, թե Պատրիկ Էդանը նախագահություն կազմվել է իրանդո-ամերիկական դաշնակցություն, որի նպատակն է կոբա մղել Մակ-Կինլեյին երկրորդ անգամ ընտրելու դեմ: Այդ նոր դաշնակցությունը, որ արդեն գործունեություն է կենտրոնացնում ռուսի և եռանդով պայքար է վարում յոգուտ Բրայանի ընտրություն, յարել են շատ իրանդացիներ, որոնք առաջ հանրապետական կուսակցության կողմնակիցներ էին: Իրանդական դաշնակցության կողմ, որի տակ ստորագրել է Պատրիկ Էդան, յարձակվում է առանձնապես իմպերիալիզմի, միլիտարիզմի և այն համաձայնության վրա Անգլիայի հետ, որ Մակ-Կինլեյի կառավարությունը կամենում է փաթեթել ամերիկացիների պարանոցը: Կոչը նենդադար և առաջակային է անուանում այն քաղաքականությունը, որին հետևում է ներկայ կառավարությունը: Միլիտարիզմը կոչվում է և որին հետևելով նա թույլ տուց Անգլիային ջնջել հարա-աֆրիկական հանրապետությունները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

27 սեպտեմբերի

ԽԱՐԿՈՎ: Բանտիչի սպանություն համար մեղադրվող զվարդայի կորնետ Լեւեկիցի արդարացած է:

ԼՕՆԴՈՆ: Եանջեյի չրջանի փոխարքաները, այն հետազոտող խաբուր, որ ստացել են տե-

ղական լրագրողները Շանգայից, դիմեցին արքունիքին և հարկադրաբար խնդրեցին վերադառնալ Պեկին: Նրանք մի և նոյն ժամանակ առեկաղնում են, թե հակառակ դեպքում ստիպված կը լինեն թողնել իրանց պաշտոնները:

ՇԱՆԳԱՅ: Տեղեկություն ստացվեց, թե դաշնակցության զորքերը հասան Պատինֆու:

ՏՆԱՆՁԻՆ: Երեկ այստեղից ֆրանսիական երեք բառալիծներ ուղևորվեցին դեպի Պատինֆու: Անգլիական զորքավորները նոյնպես պատրաստվում էր ճանապարհ ընկնելու, բայց որովհետև նա գտնվում է գերմանական զինվորական ֆոն Կետտելեյի գլխավոր հրամանատարության տակ, որ մի և նոյն ժամանակ հրամանատար է և գերմանական բրիգադայի իսկ վերջինս պաշարվելի և տեղափոխության միջոցների պակասությունն պատճառով, դեռ ևս պատրաստ չէ ուղևորվելու արշաւանքի, ուստի անգլիական զորքավորներ չի սպասի գերմանացիներին:

ԼՕՆԴՈՆ: Հաւաստի աղբյուրից հաղորդում են, թե Սոլսբերի պաշտոնապես յայտնեց, թե համաձայն է սեպտեմբերի 18-ի գերմանական շրջաբերական յայտագրին և թե Պեկինի բրիգադաները ներկայացուցել են արդեն ստացել է համապատասխան հրահանգներ:

ՆԻՒԻՐՈՎ: Պեկինից սեպտեմբերի 24-ին ուղարկված հեռագիրը հաղորդում է իբր թե չինական հաւաստի աղբյուրից հետեւեալը: «Այրի կայսրուհին լուրջ կերպով հիւանդացու Տայցն-ֆուում: Կայսրը վերջին օրերում լիակատար ազատություն ստացաւ վարելու պետական գործերը»:

Գերմանական պահանջներին բարեկամորդ պատասխան ստացված է չնորսել Լի-Սունց-Չան-գի ջանքերի:

Նինգբո, Կան-ի և Չաօչոնց-Չեաւ պետք է գլխավորեն, պրինց Չուանգ, դուք Տեղեկան և պրինց Իի-լու զատապարտված են բանտարկության ցմահ, իսկ պրինց Տուան պետք է աքսորվի հեռաւոր տեղեր, որպէս զի լրացուցիչ պատիժ «Մե-բունցեյին» աջակցելու համար:

ԳԵԼՁԻՆԳԵՐ: Նորին Բարձրություն Թագա-ժառանգը «Յարնա» շոգենաւով ժամանեց այստեղ և ապա ուղևորվեց դեպի Ֆրեդէն-բորգ:

ԽԱՐԿԻՐ ԱԼԻՔՍԱՆԴԵՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակչներ: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱՅ ՄԷԼԻՔ-ԱՆԱՄԱԼԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ր Ա Ի Է Ր

Վանքի եկեղեցու ծխականների ժողովը, որ նշանակված էր ամսին 24-ին երեք պատգամաւորների ընտրութեան համար՝ յետաձգեց հոկտեմբերի 1-ին՝ ծխականների թիւը լրել չը լինելու պատճառով: Ուստի խնդրեմ յարգել ծխականներին չնորս բերել նշանակաւ ժամի 12-ին, հրաւիրատուներ այլ ևս ուղարկվելու չեն:

Նախագահ Գ. ա. ք. Խարազեանց (հ. չ.) 1—2

Հ Ր Ա Ի Է Ր

Այս հոկտեմբերի 1-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին, նշանակված է երկրորդ անգամ երեք պատգամաւորների ընտրութեան ներսիսեան հոգեւոր զարդի համար: Ուստի խնդրում են Կուկիայի Թանդոյեան ա. Աստուածածին եկեղեցու ծխականներին՝ նշանակաւ օրը ներկայ լինել նոյն եկեղեցում ընտրութեան մասնակցելու:

Նախագահ՝ Ներսէս ք. Ղամազեանց 1—2

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ КАКАГО С.С.И.У.И.К. МОСКВА.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. լոյս տեսած գրքերը:

- 172 Առաքել Լաֆոնթէնի, թ. Մ. Նուպարեանի . 1—
- 173 Գոնիկ, Օմէշկոյի, թարգմ. Ա. Մ. 40
- 174 Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մ. 5
- 175 Հայկական նշանադրեր հարթակների համար, օր. Ն. Պատկանյանի 80
- 176 Հոսիսի ձեռնարկը, Յ. Պարոնեանի ք. տպ. 1—
- 177 Սիֆիլիս, կակուլ շանկր և ստատակ, բժշկ. Վահան Սերոբուռն 25
- 178 Մանկական լուսո, հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն լեզուով, ք. տպ. 1—
- 179 Մակիսիկ, Ստանիսկիւի, թարգմ. Ա. Մ. 15
- 180 Թշուառների բարեկամ, փոխ. բժշկ. Վ. Նրծ. 20
- 181 Իւլյանկա, թարգմ. Պ. Հովսեփեանցի 10
- 182 Նորար ծերունի, հիւզոյի, թարգմ. Ա. Մ. 15
- 183 Նասի արկածները, Օմէշկոյի, թարգմ. Պ. Պ. 10
- 184 Պատու ծիւղ, թարգմ. Տ. Սարգսեանի 3
- 185 Խոչ է խոսում սենեակը, թարգմ. Ջ. Տ. 10
- 186 Միլտոն, կաղմեց Հ. Առաքելեան 30
- 187 Մեծապատիւ մուրացկաններ, Յ. Պարոն. ք. տպ. 40

Վաճառվում են Ընկերության օգտին

- Ազատութեան մասին, Միլլի, թարգմ. Ա. Կ. 20
- Ֆրանս-Պրուսական պատերազմը 5
- Ժողովածու Մոսկովիի հայ ուսանողների 1—
- Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը, քրդց Նորայր Հ. Բիւզանդացի 1 50
- Սգուլեցոյ բարբառը, Ս. Սարգսեանի 2—
- Մեղուներ, Լ. Լանցուտոյ, թարգմ. Ջոկ 15

Դրանի՝ Типографія, контора Общества Изда- ния Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) և Tiflis (Russie) Societé de la publication des livres Arméniens. 4—10

Առանձին և բերանի խոտոյի հիւանդու- թիւների ԲՈՒՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. և երեկ, 5—7 ժ. Երևանեան հրապարակ. տ. Խարազեանի. РОИНОВЪ-ІІ Լուսակարգական գործա- րանի տակը: ӨРИВАНСКАЯ ПЛОЩАДЬ, ДОМЪ Ха- разова. (հ. հ. չ.) 16—25

ԵՐԿՐՈՐԴ ԻԳԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՌԻ- ՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ, որ գոյութիւն ունի 12 տարուց ի վեր, պարագմունքները կը սկսվեն հոկտեմբերի 8-ից:

Անցնում են կրօն, լեզու (հայերէն ռուսերէն, և վրացերէն) թուաբանութիւն և ձեռագործ ժամը 12—4:

Ուսումնարանը գտնվում է Միլլի և Կաթիլիկ փողոցների անկիւնում, արհեստա- ւորաց զարդի շինութեան մէջ: 3—3

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ մաթե- մաթիկայի համար հարկաւոր է համալսարա- նաւարտ մի ուսուցիչ, չաբաթական 20—24 դասով: դասադիրը 40 րուրի:

Դիմել հոգաբարձութեան (ӨРИВАНЪ, попечи- тель. армянск. духов. семинарія): Տեսուչ՝ Գ. Տատեան

ԲՕՄԲԵՅԻ ԵՒ ՑԵՅԼՕՆԻ ԹԵՅ

Բոմբէյի և Ցէյլոնի առաջնակարգ թէյի տուներու հետ ուղղակի բանակցութեան մտած և այս անգամ Բոմբէյի ընտիր թէյերէն զանազան տեսակներ բերել տուած ենք խիստ դիւ- րամատչելի գիններով:

Ամեն անոնք՝ որք կը փափաղին արժան և ընտիր թէյ գնել մեծաքանակ, թող հաճեն դիմել մանրամասնութեանը համար Մայսուրաձէ և Խոջափարուխովի քարավանսարան, թիւ 16, Հայկ ֓էշտիմալճեանի գրասենեակին:

Ինչ օրէն նաեւ կը ստանանք Ցէյլոնի թէյերէ կարեւոր բաղթի մը, որոնք արդէն ճամբայ եկած են: (հ. ու.) 5—10

Ս ա ր գ ի ս Վ. Ա ք ր ա ի ա մ ե ա լ

Հասցէ. Սոլոյակ, Գանսօկայեա փող. տ. Թամաշեվի, № 26, բն. № 9:

Ուղղորդում և պատրաստում է երկու սննդ անձանց չորս ամսով ընթացքում, երաշ- խաւորութեամբ և հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագմունք- ներ գտնելու համար:

Հ Ա Շ Ո Ւ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ւ Ն

- 1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով:
 - 2) Առեւտրական թուաբանութիւն:
 - 3) Առեւտրական թղթակցութիւն:
 - 4) Գեղարվեստութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրթիտներէ և ուղ- ղուն ամենալատ ձեռքերի:
- Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչև 11-ը և 4-ից մինչև 7-ը երե- կոյեան: (չ. ո. չ.) 7—14

ՀՄՈՒՏ ՀԱՇՈՒԱՊԱՀ

Գալ տեղեկ հայերէն, ռուսերէն լեզուներին և օպերացիաներին, Մոսկովա աւարտած, տեղ է որոնում այստեղ կամ այլ քաղաքում Դիմել նամակով, Авчальская, № 77, БУХГАЛТЕРУ. (ռ. չ. հ.) 1—3

Հ Ր Ա Ի Է Ր

Հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, Թիֆլիսի ք. մասի Թանդոյեանց ա. Առաւա- ժածին, ա. Կարապետի, ա. Միսաի, Էլմիաձ- նեցոյ և Ջորաբաչի ա. Գեորգ եկեղեցիների ձայնատու ծխականները հրաւիրում են ներ- կայ գտնվել իւրաքանչիւրը իրանց եկեղեցի- ներում՝ ներսիսեան հոգեւոր զարդի հոգա- բարձական ընտրութեան համար երկրորդ և վերջին անգամ ընտրել երեք-երեք պատգա- մաւորներ: այս ընտրութիւնը, երկրորդ ան- գամը լինելու առթիւ, հրաւիր և ծխական ներկայ գտնվեն վաւերական և համարվում:

Գործակալ ք. մասի Թիֆլիսի 1—2 Գրիգոր քահ. Մանգուկոն:

Հ Ր Ա Ի Է Ր

Առաջիկայ կիրակի օրը, հոկտեմբերի 1-ին, ա. պատարագից յետոյ, 12 ժամին, այսու յար- գոյաբար հրաւիրում են Վանայ, Կաթողիկէի, Բեղդիսէի, Աւետեաց, Մոզուոյ, ա. Նշանի, Նորաշէնի, Գամոյեանց, Գարափի և ա. Սար- գիս եկեղեցիների բարեկաշտ ձայնատու ծխա- կանները վերոյիշեալ եկեղեցիները՝ երկրորդ և վերջին անգամ մասնակցելու երեք-երեք պատ- գամաւորների ընտրութիւններին, որոնք պէտք է ընտրեն Թիֆլիսի ներսիսեան հայոց հոգեւոր զարդի համար հոգաբարձուներ: Այս անգամ հրաւիր ձայնատու ծխական անձինք ներկայ լի- նեն՝ ժողովները վաւերական և օրինաւոր են համարվում:

Գործակալ ա. մասի եկեղ. հայոց Թիֆլիսի՝ Ջաբարիա քահ. Ջարեղեան 1—2

Տալիս եւ մասնաւոր դասեր հայերէնի ու գրականութեան. նաեւ գերմա- ներէնի: Հասցէս Շ Ա Ն Թ

Грибоѣдовская 40, кв. кап. Егорова. 7—8

ԲՈՂԿԱՅԵՆ ՎԱՅՆ ՍՐԺՐՈՒՆԻ

վերադառնալով արտասահմանից, վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը, առաւօտեան 9—11 ժամը, երեկոյեան 5—7-ը: Սերգիեյ- սկայա փողոց, № 12, տ. Մոլիանովի: 5—5